*Պարոն/Տիկին* Ա. Ապոլլոնյանին և Ն. Գաբրիելյանին *ին*

*ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն*

---

***Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար***

---

***Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն***

***Ա. Սաֆարյան*** ____________

«26» 06 2024

*ՀՀ հանրային ծառայությունները*
*կարգավորող հանձնաժողովի*
*գլխավոր քարտուղար*
*պարոն Ա. Սաֆարյանին*

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Հանձնաժողովի աշխատակցի անունը, ազգանունը՝**
   - ☐ Դավիթ Մուրադյան
   - ☐ Լուսինե Մկրտչյան
   - ☐ Լուսինե Խեչումյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   - ☐ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի պետ,
   - ☐ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի ավագ մասնագետ
   - ☐ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության ֆինանսական վերլուծության բաժնի գլխավոր տնտեսագետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Մոլդովա, Քիշնև, 2024 թվականի հունիսի 19-20-ը:

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝**
   Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհուրդ (CEER):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհուրդի (CEER) ԵՄ-ն հանուն էներգետիկայի (EU4Energy)՝ «Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցման խթանում» ծրագրի շրջանակներում կիբերանվտանգության վերաբերյալ տարածաշրջանային դասընթաց: Դասընթացը պատկերացում տվեց էներգետիկայի ոլորտի համատեքստում կիբերանվտանգության հիմնախնդիրների վերաբերյալ՝ ներառյալ կարգավորումը, բարձրացրեց ԵՄ չափանիշների և էներգետիկայի կիբերանվտանգության մոտեցումների ըմբռնումը և ուժեղացրեց կիբերանվտանգության խնդիրները լուծելու կարողությունները:

6. **Քննարկվող թեմաները (հարցերը)՝**

Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհրդի գլխավոր քարտուղարի բացման խոսքից հետո Մոլդովայի Հանրապետության էներգետիկայի նախարարության պետական քարտուղարը կարճ ակնարկ ներկայացրեց Մոլդովայի Հանրապետությունում էներգետիկ ոլորտում կիբերանվտանգության համակարգի վերաբերյալ:

Այնուհետև, էլեկտրաէներգիայի արժեշղթայում կիբեր դերերի և պարտականությունների վերասահմանման վերաբերյալ զեկույցով հանդես եկավ կիբերանվտանգության կենտրոնի առաջնորդը:

Նորվեգիայի էներգետիկայի կարգավորող մարմնի կիբերանվտանգության խորհրդականը ներկայացրեց Նորվեգիայի էներգետիկ ոլորտի ներկայիս առանձնահատկությունները, գործառնական տեխնոլոգիաների թվային սպառնալիքները: Զեկույցից հետո բոլոր մասնակիցները մասնակցեցին թվային անվտանգության վերաբերյալ գործնական պարապմունքի՝ «Շոդան» վարժության:

Ելույթով հանդես եկավ նաև Հյուսիսային Մակեդոնիայի էներգետիկայի, ջրային ծառայությունների և քաղաքային թափոնների կառավարման ծառայությունների ՏՏ վարչության պետը, որը հանդես եկավ էներգետիկ ոլորտում կիբերանվտանգության կարգավորումը թեմայով զեկույցով, ինչպես նաև ներկայացրեց Հյուսիսային Մակեդոնիայի մոտեցումը կիբերանվտանգության կանոնների վերաբերյալ:

Ռումինիայի կիբերանվտանգության ավագ ճարտարապետ, տեխնոլոգիական խորհրդատուն խոսեց ամպային անվտանգության և գործառնական տեխնոլոգիաների մասին:

Ներկայացվեցին կիբերանվտանգության ոլորտում ներդրումների իրականացման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորումները և դրանց

իրականացման արդյունքում կատարողական ցուցանիշների վերահսկման մեթոդները, ստանդարտների ներդրման մեխանիզմները և այլն:

Այնուհետև բոլոր մասնակիցները ներկայացրեցին իրենց երկրում էներգետիկ ոլորտում կիբերանվտանգության կարգավորման վերջին զարգացումները:

7. **Հանդիպումները, ելույթները՝**

Հանձնաժողովի ներկայացուցիչները ներկայացրեցին Հայաստանի Հանրապետությունում կիբերանվտանգության վերջին զարգացումները: Մասնավորապես, նշվեց, որ ներկայումս ակտիվ քննարկվում է հանրապետության կիբերանվտանգության մասին օրենսդրությունը, որոշվում են կրիտիկական ենթակառուցվածքները և պետական մարմինների դերակատարությունները:

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Դասընթացի ընթացքում որոշումներ և փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **Առաջարկություններ, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Առաջարկվեց պարբերաբար կազմակերպել նմանատիպ հանդիպումներ փորձի փոխանակման համար:

**Գործուղվող՝ Դավիթ Մուրադյան** ____________________
(ստորագրություն)

**Գործուղվող՝ Լուսինե Մկրտչյան** ____________________
(ստորագրություն)

**Գործուղվող՝ Լուսինե Խեչումյան** ____________________
(ստորագրություն)

**26.06.2024**

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

**Օրինակելի ձև**

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով__

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 441-ԳՔ**, 22.05.2024**թ**., **Հրաման 462-ԳՔ**, 29.05.2024**թ**.

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի պետ՝ **Դավիթ Մուրադյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի ավագ մասնագետ՝ **Լուսինե Մկրտչյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության ֆինանսական վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ՝ **Լուսինե Խեչումյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք. **Քիշնև __/ Մոլդովա /__**

5. Գործուղման ժամկետները՝ **18.06.2024թ.-ից 21.06.2024թ.**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **__ճանապարհածախս, գիշերավարձ,__** օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, **__օրապահիկ__** և այլն)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի
կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | Դավիթ Մուրադյան | Լուսինե Մկրտչյան | Լուսինե Խեչումյան | Ընդամենը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| Ճանապարհածախս | Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս) | | | | |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | | | | - |
| Գիշերավարձ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար) | | | | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | | | | |
| | Օրերի քանակը | | | | |
| | Ընդամենը (դրամ) | - | - | - | - |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար) | 46 | 46 | 46 | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 17,829 | 17,829 | 17,863 | |
| | Օրերի քանակը | 4 | 4 | 4 | |
| | Ընդամենը (դրամ) | 71,315 | 71,315 | 71,451 | 214.081 |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների վճար | | | | |
| | Մուտքի արտոնագրի վճար | | | | |
| | Այլ ծախսեր (*նկարագրել*) | | | | |
| **Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)** | | 71.315 | 71.315 | 71.451 | 214.081 |

**Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,**

*(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)*

Ամսաթիվ

25.06.2024թ.